



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

199

8  
C-35

2011

FY 2003

8  
C-35

ՃԱՏԱՔՈՍ  
ՍԱՓՐԻՉԸ

ԿԱՑԱԿԵՐՔՈՒԹԻՒՆ  
ՅԵՐԿՈՒԽՄ ԱՐԱՐՄ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ  
Տ . Գ . ՓԱՓՈԶԵԱՆԻ

Վ . ՊՈԼԲՍ  
ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱ

1872

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍԱՓՐԻՉԸ

ԿԱՑԱԿԵՐՔՈՒԹԻՒՆ  
ՁԵՐԿՈՒՄ ԱՐԱՐՄ

---

ԹԵՐԳՄԱՆԱԹԻՒՆ

Տ . Գ . ՓԱՓԱԶԵԱՆԻ

---

Դ . ՊՈԼԱՎ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅ

1872

Ա

ԱՐԱՐ Ա.

ՎԱՅԵԼՈՒՀ ՍԵՆԵԱԿ ՄՊ

ՏԵՍԻԼ Ա.

( ԲԻԵՌ Ա.Ա.Ա.ՆՁԻՆ ՆՍՏԱԾ )

1963

Ժամը վեցին եկածին պէս, ուղարկի տան պարտեզին դռնէն մոտած՝ երկու տարիէ ի վեր իւր սիրոյն անշնչելի կրակովը վառուած Թոռնիս պիտի տեսնեմ, ( հրդանքն ժամացաւ հայելու ) այս թշուառական ժամացոյցն ալ չի քալեր, միշտ չորսին վրայ է . եթէ պարտատիրօշը հետ պայմանադրութիւն մը ընէի այս ինչ ժամուն ստակը վճարելուս խակոյն նոյն ժամը կը մօտենար, բայց երջանկութեանս վայրկեանները տարիներու նման կերպնան, և ինձ նման սիրահարներու սրտերը կը մաշեցնեն : Ասոր հետ մեկուղ եթէ դռնեն մտած

— 6 —

ատենս տեսնուիմ ուրիշէ մը, բանս  
ուսած է . ունեցած պատիւս ստկի մը  
պիտի ըլլայ . . . Արդեօք երթամթէ  
չերթամ . ( Տունեւն երւ ) է՞հ ինչ որ  
ըլլայ հոդ չէ , քանի որ կուդամ ըսի ,  
պիտի երթամ , զի եթէ խոստմնաւ  
գանց գտնուիմ , այսուհետև խօսքե-  
րուս հաւատարմութիւն չի պիտի ընեն ,  
և այս հարմար առիթը ձեռքէս պիտի  
փախցնեմ : ( Հայէն դէմը անցո՞ն է ըստու )  
ո՞հ , ինչ ընելու է հիմայ , մոռցեր եմ  
ածիլուելու . բայց քանի որ դեռ ժա-  
մանակ ունինք՝ աս մեր սակարելք կան-  
չել աալով ածիլուինք : ( Հանդո՞ւ ըստնէ )  
Սիմոն' Սիմոն' Սիմոն' :

## ՏԵՍԻԼ Բ

Նոյն եւ Սիմոն ( Հ-Կ-Ը-Ը )

Սիմոն — Ի՞նչ կը հրամայէք տէր իմ :

— 7 —

Բիէռ — Շուտով գնա՛ սա սակրիչը  
կանչէ :

Սիմոն — Ո՞ր սակրիչը :

Բիէռ — Զե՞ս գիտեր ամեն ատեն  
ո՞ր սակրիչին կածիլուիմ :

Սիմոն — Սա փողոցին ծայրի թղթա-  
վաճառին քովի . . .

Բիէռ — Ա.յո՛ , այո՛ , շու՛տ առ բեր :

Սիմոն — Խիստ բարի , սակայն եթէ  
գործ ունենայ :

Բիէռ — Ուրիշ մը գտեր :

Սիմոն — ( Մինչ դրան առջև երեսայ , և  
դառնայ ) եթէ գործը լրմն-  
նալու վրայէ սպասե՞մ . թէոչ :

Բիէռ — Քանի որ ուրիշները կան ,  
ինչու սպասես :

Սիմոն — ( Դունչաւ դրան առջև երեսայ , և  
դառնայ ) միթէ տաճիկ սակ-  
րիչ մալ բերելու ըլլամ . . .

Բիէռ — ( Գէւ հը դարս-նետ ) երկնցու-  
ցիր Սիմոն , ազգը պէտք  
չէ ինձի . բաւական է որ  
սակրիչ մը բերես :

2244-609

- Աիմոն — (Պարզեաւ քրանը առջև էր նոյն և  
դաշտայ ) ասրակոյս չիկայ որ  
ձեռքը զուտ մէկը ըլլալու է .
- Բիեռ — (Զայրացած ) ինչ խօսք չի  
հասկցող մարդ ես Սիմոն ,  
ինչ որ ըլլայ թող ըլլայ բեր .
- Սիմոն — (Պարզեաւ քրանը առջև էր նոյն և  
դաշտայ ) զօր օրինակ երիտա-  
սարդ է եղեր կամ ծեր :
- Բիեռ — (Ս.եւ չայրացած ) Սիմոն բար-  
կութիւնս մի՛ զրգուեր . կար-  
ծեմ թէ ըստ սովորութեան  
միսդ կը քերուի :
- Սիմոն — (Պահճ քորո իւլէ և վերաբին  
ժուկ ) կեցէ՞ք տէր իմ , հիմա  
եթէ հարցընեմ դարձեալ  
ոլիտի զայրանաք , դործիք-  
ները հետը բերէ՞ թէ ոչ :
- Բիեռ — (Տեղին շաբաթեւէլ ) հասկցայ ա-  
ւանակ , զիս կը ծաղրես .  
ալ բաւականէ , շուտ դուրս  
ել դաղան . ( ձեցեւի իւլակ ) :

### ՏԵՍԻԼ Գ.

Բիեռ առանձին

Ծառայ չէ՞ , Աստուծոյ մէկ պա-  
տիժը . իմ տեղս եթէ ուրիշ մը ըլլար ,  
շատոնց վանտած էր , բայց հիմակուան  
ծառաներուն սղութեանը պատճառաւ  
միայնդամայն ապօլիսի կտորով մը  
բռնած ըլլալուս . չեմ կրնար ճամբել .  
թէպէտ և գործի մը խրկելու ըլլար  
առանց այսպէս ժամերով զիս բարկա-  
ցընելու և առանց ծեծ ուտելու չեր-  
թար :

### ՏԵՍԻԼ Դ.

Նոյն եւ Ժոռժ

- Բիեռ — Օ՛ ողարոն աչքը բաց ինչ  
ըրիր նայինք , կոշկոկարին  
գացի՞ր :
- Ժոռժ — Ահա անկէ կուգամ , բայց  
մուճակներդ վաղը պիտի  
տայ :

Բիեռ — Խնծի այսօր պէտք էր, բայց  
ինչ ընենք վաղը թող ըլլայ,  
դուն հիմա սա մեծ փողո-  
ցին մէջ.

Ժօռժ — Շատ աղեկ, շատ աղեկ,  
( Դէ՞ռ է դուռը իւ Հուն, )

Բիեռ — Կեցի՛ր ծո՛ կեցի՛ր, ըսելի-  
քիս կէսը բերանս մնաց:  
Պարոն Նիկողիմոսին տու-  
նը զիտես այնպէս չէ՞ :

Ժօռժ — Հաղար անգամ դացեր ե-  
կեր եմ. ( Դէ՞ռ է դուռը իւ Հո-  
ւն, )

Բիեռ — Ասոուած պատիժդ տայ  
շան՝ լակոտ, կեցի՛ր ու՞ր  
կերթաս. ( Դէ՞ռ է այս ալ  
միւս թշուառականին վար-  
մանցը հակառակ. ( Բայց )  
պարոն Նիկողիմոսին գնա  
կ . . .

Ժօռժ — Անմիջապէս տէր իմ: ( Դէ՞ռ  
է դուռը իւ Հուն, )

Բիեռ — ( Բարձրանեա՛ւ սու և ելով ) ու՞ր  
կերթաս դարշելի.

Ժօռժ — Պարոն Նիկողիմոսին առունը  
չոսի՞ր:

Բիեռ — Այո՛, բայց ինչ պիտի ը-  
սես:

Ժօռժ — Ես ինչ դիտնամ:

Բիեռ — Քանի որ ըսելիքդ չդիտես  
էշ դլուխ, ինչու առանց  
խօսքիս վախճանին սպասե-  
լու հրացանին բերնէն ելած  
գնտակին պէս վաղելով կոր-  
սուիլ կուզես:

Ժօռժ — Ալ չեմ վազեր.

Բիեռ — Պարոն Նիկողիմոսը տես-  
նելով այս երեկոյ իրեն  
հոտ տեսնուելու չի կարո-  
ղանալս իմացու՛ր: Ահա  
այսափ, հիմա կորսուէ՛:

Ժօռժ — ( Ծանրաւայլ գիւղու սուէնը ) պա-  
րոն Նիկողիմոսը տեսնելով,

այս երեկոյ իրեն հետ տես  
նուելու չի կարողանալս իմա-  
ցուր ահա այս չափ հիմայ  
կորսուէ : ( Հովհաննել Դինէ )

Անձինք

### ՏԵՍԻԼ Ա.

Բիէռ

Այս ի՞նչ դարշելի մարդկանց մէջ  
եմ մնացեր . մէկը պաշտօնի մը զրկած  
ժամանակդ ծեծելով դռնէն դուրս  
հանելու ես . և միւսը չուանով տեղ մը  
կապելով ընելիք գործերը ամբողջ ի-  
մացնելէդ ետքը թող տալու ես . ասկէ  
ուրիշ ճար չիկայ . թող ալօթէ այս  
թշուառականն ալ որ , ողորմած հոգի  
հօրս հին ծառանիերէն ըլլալուն համար  
չեմ ուզեր քովէս հեռացնել :

Ֆրանտուա . . . . . Ծերունի վաճառական  
Թոմինի , . . . . . նւր աղջիկը  
Բիէռ . . . . . Թոմինիի սիրահարը  
Բասկալ . . . . . Ֆրանտուաի եղբայրը  
Ֆիլիպ . . . . . » ծառայն  
Շատախօս ասիրիչ . . . . .  
Ժոռժ . . . . . Բիէռի ծառայն  
Վիմն . . . . . Բիէռի ծառայն

### ՏԵՍԻԼ Զ

Նոյն եւ Ալմոն

Ակմոն — Զեր սափրիլ տեղ մը դա-

ցած ըլլալէն , պարտաւորե .  
ցայ ուրիշ մը բերել եթէ  
կընդունիք :

Բիեռ — Հոգ չէ՛ թող ներս դայ ,  
Սիմոն — ( Պէտակ հաւեցած ) ներս հրամ .  
մեցէք պարո՞ն սակրիչ :

### ՏԵՍԻԼ Է

Նոյն եւ սակրիչ

Սակի — ( Ներս առնելով խոնարհելն եղաւ  
գոյքիւն ու բնիւու և բնիւու էբ նե  
շան էւ ճանչու , և իւսէ մեկուու )  
այն արդեօք թէ ոչ նմանե -  
ցուցինք . . . . ոչ . ճիշդ այն  
ըլլալու է . . բայց անդամ  
մը անունը հարցնենք :  
( բայց , բնիւու ) ներեցէք  
սիրելի պարոնս , ձեր պատ -  
ուական անունը ինչ է :

Բիեռ — Բիեռ :

- Սալի — Օ՛, այս ինչ շուտ մեծցեր .  
բաւական պեխեր ալ ունե .  
ցեր էք, արդարև ձեզ այս .  
պէս տեսնելով ճանճնալուս  
համար ռւրախանալու եմ :  
Բիէռ — Ըսել է որ զիս գիտէք :  
Սալի — Եւ ինչպէս չղիտնամ, մինչ  
դեռ ձեռքս մեծցած էք .  
ես այս տանը հին ծառաւ  
ներէն եմ, վախճանեալ սի .  
ըեւի հօրերնուդ Աստուած  
ողորմի հոգոյն, սափրիչը  
ես էի, կարելի՞ է որ զձեզ  
չի ճանչնամ, թէպէտ և հօւ  
ըերնուդ մեռնելէն ի վեր 20  
տարիէ, (+ էւ հոգելէն ի դժու )  
այո՛ սխալած չեմ, ճիշդ 20  
տարիէ վասն զի լուսահոգին  
59 ին մեռաւ, և այն տարի -  
քին . . . .  
Բիէռ — (Ժամացան հայելու) ա՛հ կառ

- զաշեմ պարո՞ն սափրիչ ,  
գործիքդ պատրաստէ , վա-  
սըն զի ստիպողական գործ  
մունիմ, պիտի երթամ :  
Սալի — Խիստ բարի, պիտի ածիլ-  
ուիք թէ մաղերնիդ կտրել  
տաք :  
Բիէռ — Միմիայն պիտի ածիլուիմ,  
բայց կաղաչեմ քիչ մը շուտ  
բռնեք ձեռքերնիդ :  
Սալի — Ըստ իս եթէ միայն մաղեր-  
նիդ կտրել տայիք, աւելի  
աղէկ կընէիք :  
Բիէռ — Ինչո՞ւ :  
Սալի — Որովհետեւ չաբաթ օր ածիլ-  
ուիլը գէշէ կըսեն ,  
Բիէռ — Դուք աղէկութեանը գէշու-  
թեանը մի նայիք սա մօրու-  
սըս մաքրեցէք :  
Սալի — Իմ պարո՞քս է անդամ մը ը-  
սել, կուզէք ընդունեցէք ,  
կուզէք մի՛ ընդունիք . (+ էւ  
իւսուկ ) արդարեւ իմ ըրածո

ալ խենդութիւն է, ինչ որ հրամայեն  
կատարելու եմ. (Այս բառը բնեւ է զե-  
պէլուն երբեք, բայց ) ըստահոգի հայրերնիդ  
Աստուած ողորմի հոգուն, շաբաթ օր  
մը ածիրուելու համար զիս կանչեր էր  
իրեն ըստի թէ եկէք այսօր մածելուիք.  
(Կունք ու համար լուսակ) այն ալ ձեզի նման  
ինչու ըսելով պատճառը յայտնելուս,  
երբէք չեմ մոռցած դրպանէն փայ-  
լուն Փրանդ մը տալով, շնորհակալ եմ  
սափրիչ ըստաւ, որ զիս կը հոգտա . առ  
այս դրամը իբր վարձք, զի թէպէտ և  
այսօր չի պիտի ածիրուիմ, այլ չեմ ու-  
զեր որ դու ալ վնասես : Ես անոր նը-  
ման հաւատով, անոր նման աղքա-  
տասէր, անոր նման որբերու պաշտ-  
պան մարդ չի տեսայ . . . ու՞րէ այն  
նախնի մարդիկը . . . դուք այն ա-  
տեն դեռ պղտիկ բան մ'էիք և որչա՞փ  
ալ չարութիւն կը դորձէիք : Օր մը  
սանտրիս ակռաները ամբողջ կոտուե-

զիք . չեմ գիտեր կը յիշե՞ս : Աղեկ  
միտքս եկաւ , դուք եվբայր մալ ու-  
նիք Բօլ անուամբ , անշուշտ բաւական  
մեծյած է հիմայ : ԱՇ , ու՞ր մնացին  
այն ժամանակները :

Բիեռ - ( Գիւրուտ ) Առ քեզի վոր-  
ձանք մ'ալ :

Սակայն մասին պատճեն առաջ է առաջ գործիքն ինչու բարի տղայ մ'էր . եղբայ մն զբեց ինձի բերելով կը սիրցունէր , մինչև այն ատեն նեղ փողոցին խանութը 30 դաշ-հեկան ամսականով վարձած էի : Ճի-մայ 150 դահեկան տալիս ետքը թրց ուառական մարդը դարձեալ կը մըր-մուայ , Այնպիսի խօսասիրտ մարդ մը որ անցեալօր զիրար պիտի բզքտէինք . խանութին նըստարանները հինցած ըլ-լալը իրեն իմացնելուս համար , այս դարշելին . . . .

Բիէռ — Բարեկամ, դուք զիս ածիք  
լելու եկաք. թէ զլոյնս  
ուռեցնելու:

Սամի — Ահա կսկսիմ, երկու խօսք  
ընե՞ն ալ յանցանքէ, մանկութեան  
ատենդ այսպէս չէիր, որ ատեն ձեր  
տունը գայի, քովս մօտենալով կ'ստի-  
պէիր երկայն պատմութիւններ ըսել:  
Խոկ հիմայ որչա՞փ անհամբեր ես և  
կաճապարես: Ահապարելը շատ գէշ  
բան է կըսէին մեր նախնիքը. համողե-  
լով թէ աճապարեալ գործին մէջ սա-  
տանան կը մտնէ, թէ աճապարող մը  
առանց վնասու չի կրնար նստիլ. թէ  
երթալու աճապարողին վերարկուն ոտ-  
ուըներուն կը պլուի:

Բիէռ — (Զայրունիւ որ+ էլո՞ ) Ինչ  
շատախօս մարդ ես եղեր բարե-  
կամ, երկու ժամէ ի վեր ականջիս տակ  
գլուխս տարիր. (Առնին) այս շաղակ-  
րատ մարդը ուսկի՞ց գտար:

Սամի — Շաղակրա՞տ ըսիր, երբէք  
չեմ ընդունիր, ինձի լուութիւնը  
սիլող անուանի Սամիիչ կոմիտաս կը-  
սեն:

Սիմոն — (Սէկուսէ) Տեմողները Ասա-  
տուծոյ համար թող ըսեն:

Սամի — Յաճախորդներս շատ կը սի-  
րեն զիս և վերջին ծայր կը յար-  
դեն, մինչև ցարդ կենացս մէջ և ոչ  
մէկուն բերնէն գէշ խօսք մը լսեցի,  
թէպէտև երէկ չէ առջի օր կոպտին  
մէկը . . . .

Բիէռ — Զիս պիտի ածիլե՞ս թէ ոչ.  
շուշ պատասխանէ՛:

Սամի — Ուրիշ ինչ պաշտօն ունէի հոս  
դալու:

Բիէռ — Ուրեմն շաղակրատութիւնը  
մէկդի ձգելով գործի սկսէ՛, եթէ  
ուզածիս պէս շուտ մը ածիլեա՛ ոսկի  
մը պիտի տամ:

Սամի — (Սէկուսէ) Ես անանկ ստակը  
պաշտողներէն չեմ . . . . ձեզմէ  
ստակ մը չեմ ուզեր, վասն զի հօրեր-  
նուդ շատ բարութիւնները տեսած եմ,  
լոյս իցնէ հոգուն առատաճեռն և աղ-

Նուական մարդ մէր, առառու իրիկուն  
սեղանէն մէկ երկու հիւր պակաս չէր,  
միանդամայն լինծի անանկ պատիւներ,  
անանկ յարդանքներ կը մատուցա  
նէր որ . . . . .

Բիեռ — Ե՛ բարեկամ, ալ հիմայ կը  
ճաթիմ, (պողովէ) վայ, վայ,  
վայ վայ. ծնօտա, ծնօտա:

**Սակայն ինչ եղար :**

ԲԵՒՆ — Ինչպիսի ըլլամ, սատանան՝  
տանի քեզի պէս սափրիչը, ծնօս  
տրս կտրեղիր :

Սակի — Եւ չըսի՞ քեզի թէ աճապտ-  
պարելը դէշ վախճան կունենայ .  
յանցանքը ձերն է , վայրկան մը հան-  
դիստ չես նստիր որ՝ ուղածիս պէս ա-  
ծիլեմ . միանգամայն թեաթօռ քըլա-  
լուն գլուխնիդ չէք կընար կոր խաղնել  
խանութս այս գործին յատուկ թեա-  
թօռ մը ունիմ , հոն նստողը շատ հան-  
դիստ կընէ . անցեալ օր պարոն չէն-

PENN.

Բիէռ — ( Ծագը էւ բուե և էլլուես ապ-  
աշտ էւաղնեթիւն, մէկուսէ ) Պարձեալ ըստ  
կըսաւ, համբերութիւն, համբերութիւն  
ըսի, ալ ճարս հատաւ, հիմա կը ճա-  
թիմ :

Սակայն պարզ է, որ այս գործը կամ առաջարկ է առաջ բերելու համար, ու այս գործը կամ առաջարկ է առաջ բերելու համար:

Բիեռ — ( Զարսնէն ) Ա՛լ սիրիկայուա-  
թիւնը ձեռք առիք, եթէ ձայնդ-  
չի կտրես, ոտքիս տակն առած այն-  
պէս կը ծեծեմ որ ապուխտ կը հա-  
նեմ :

Սակայն պարունչէ ներեցէք, ուշ  
ըիկայ չէք կրնար ըսել ինձի, յի-  
բաւի հօրերնուդ բաւական հացը կե-  
րայ, բայց ձեր պատառաքոյծը ըմալ  
չեմ ընդունիր: Ես ասանկ չահ չեմ ուղեր

ինձմէ աղէկ սափրիչ մը գտիր և անոր  
ածիլուէ , ( գործէները ժողութէն ) սա նա-  
յեցէք , հօրը տեղը մարդը ոտքին  
տակը պիտի առնէ եղեր , պիտի ծե-  
ծէ եղեք , ապուխոը պիտի հանէ ե-  
ղեր , չգիտեմ ինչ պիտի ընէ եղեր . . .  
ինչ աստիճան քաջութիւն . . . ուր  
սովորեցար այդ քաջութիւնը :

Բիէռ — ( Մէկուսի ) իրաւ պիտի երթայ ,  
ինչ պիտի ընեմ հիմա , մէկ երես  
ածիլուած միւսը չածիլուած . ( առէնէն )  
ինչ է այն բարեկամ պիտի երթա՞ս :

Սափրիջոյս չիկայ , այսափ  
նախատուելէս ետքը կրոբի՞  
բան է որ կենամ . հայս դուն կուտաս  
կոր , անցեալներս յաճախորդներէս  
մէկը անպատիւ խօսք մը ըսելուն ին՞-  
չեր ըրի դիտե՞ս . հօրդ բարեկամու-  
թեանը սիրոյն համար էր այսափի համ-  
բերելս :

Բիէռ — ( Ալոննին ) Թող մի՛ տաը որ

սա մարդը երթայ :  
Սափրիջոյս աղարել ուշեւէն ) Ո՛չ ,  
ո՛չ թողէք զիս , անկարելի է վայր-  
կեան մը ևս սպասել , պիտի երթամ ,  
որովհետեւ ոչ սրիկայրութիւնս ձգեց և  
ոչ շաղակըատութիւնս , յանցանքս ինչ  
է . երկու խօսք ալ չընելով ճաթի՞մ .  
չէ անկարելի է ալ չեմ կրնար հանդուր-  
ժել . թողէք զիս . մինչև այս տարիքս  
դամ և ոչ մէկէն անարդական խօսք մը  
լսեմ . . .

Բիէռ — ( Մէկուսի ) Ճար չիկայ , աղա-  
չելու է . ( բոբէ ) պարս՞ն սափրիչ ,  
ակամայ բերնէս թռաւ այդ խօսքը ,  
ներեցէք , եկէք թէ սա երեսս ալ ա-  
ծիլեցէք . և թէ ծաղկի փողոցին ծայ-  
րը նստող պարոն չէնրիին ովլ ըլլալը  
ուղածնուղ պէս երկայն բարակ պատ-  
մեցէք :

Սափրիջոյս եր բառնուէն ) բա-  
րեկամ դուք ատաղձադործ պա-  
րոն չէնրիին լաւ ճաննալու էք :

Բիէռ — (Մէկունք) Տեսէ՛ք ի՞նչպէս  
դարձաւ . ճշմարիտ աշխարհիս մէջ  
այս աստիճան շատախօսութիւնը սիրող  
մարդ չի տեսայ . (առէւնք) այս ,  
պարոն Հէնրին ճանչնալու եմ բայց չեմ  
յիշեր կոր . . . դուն սա անձեռոցդ  
հանէ :

Սափ — (Պատրիարքիւն) Այս պարոն  
Հէնրին ծեր հօրը կենդանութեանը  
հոս շատ կուդար կերթար . փառաւոր  
մօրուս մը ունի , միջահասակ և գեր .  
դէժքը ծիծաղկոտ և վերջին ծայր  
խեղկատակ , միանդամայն հին դուխու-  
ներէն է . առատաձեռն և . . .

Բիէռ — Ճասկցայ , հասկցայ , սա պա-  
րոն Հէնրին , պարապ տեղը մի հոգ-  
նիք պատմելու , հիմա ճանչցայ . (Հէկունք)  
ճանչցայ ըսելէն ՚ի զատ ուրիշ ճար չի-  
կայ :

Սափ — Քանի որ կը ճանչնաք ինչու  
իրեն հետ չէք տեսնուիր որչափ որ

ըլլայ հօրդ բարեկամներէն է , եթէ կը  
հաճիք այսօր զայն հոս բերեմ , զի շատ  
կը գոհանաք իրմէ , հօրդ հետ իբր եղա-  
բայր կը վարուէր :

Բիէռ — (Մէկունք) Ո՞հ դարձեալ ըս-  
կըսաւ :

Սափ — Այլ սակայն խեղճին վիճակը  
այս օրերս շատ գէշ է , խանութիս  
կից ծիսավաճառի խանութ մը ունէր ,  
ասկէց երկու տարի առաջ մագսատան  
զործակալներէն պարօն Բանթալոնին . . .  
դուցէ կը ճանչնաք :

Բիէռ — (Մէկունք) տարակոյս չկայ որ  
այս մարդը զիս պիտի խենդեցնէ :

Սափ — Այս բարեկամնիսընեց խա-  
նութը անոր ծախեց , այնչափ ա-  
ռաջարկեցի թէ եկուը սա ստակով եկա-  
մուտ մը առնենք բայց որո՞ւ կըսես ,  
երեք ամսուան մէջ ստակին տակէն մը-  
տաւ վրայէն ելաւ , այս աստիճան ճիռ-

քը բաց մարդ չեմ տեսեր :

Բիէռ — Պաշտօննիդ մոռցաք բարե-

կամ, պաշտօննիդ, ալ բաւական է կա-  
ղաչեմ :

Սակի — Երբեմն անանկ դործ երու մէջ  
կը գտնուի որ մարդ ծիծաղը չի  
կրնար բռնել, օր մը եկեր մեր տանը  
դուռը ձեռք առած զիս կը հարցնէ,  
ես ալ նոյն միջոցին ակռայ քաշել գա-  
ցած ըլլալուս :

Բիեռ — 'ի սէր Աստուծոյ . 'ի սէր զա-  
ւակացըդ կաղաչեմ. երես անկեալ  
կը պաղատիմ, լուէ ալ համբերելու ժա-  
մանակ չունիմ :

Սակի — Քաւ լիցի տէր, պարոն Նի-  
կողիմոսին ինչ քնութեան տէրը ը-  
լալը պատմէ ըսելնուդ համար :

Բիեռ — Բարով չըսէի :

Սակի — (Անելել իսկու. և երկու անդամ բիեռէ  
երեսն 'է լիք կը բանական) :

Բիեռ — (Բաքս-Ռեամբ երեսը սբէելով), է՛շ  
գլուխ, այսինչ քաղաքավար մարդ  
ես. դէմքս թքով ծանկեցիր :

Սակի — Ա՛ն պարոն, խոնարհութեամբ  
ներողամութիւն կը խնդրեմ. այնու-  
ակես հարբուխ մը եղեր եմ որ, (Դան-  
էու կը բանական) ո'հ, արդարեւ շատ ան-  
կըրթութիւն . այս թշուառական բռնք-  
տալըն ալ ուսկի՞ց եկաւ : (Իբր նէ անո՞  
յեռ+ը կունէ պահանձէն) ներեցէք կաղաչեմ  
աղնիւ պարոնս :

Բիեռ — Ինչ որ է հոդ չէ, դու զիս  
շուտ մը ածիլէ :

Սակի — Ցիրաւի շատ ամօթահար եմ:

Բիեռ — Հոդ չէ ըսի . հոդ չէ, դի-  
տութեամբ ըլըթիր ա' բան մ'էր ե-

զաւ, սա գործդ կատարելադործէ :

Սակի — Եթէ չիներէք, ամօթէս դե-

տինը կանցնիմ :

Բիեռ — (Մեկունք) Ո՞ւր էր թէ անանկ  
բան մը ըլլար և ես ձեռքէդ ա-  
զատէի . (Բաքս) յանցանքդ ներեցի կը-  
սեմ պարոն, ինչ խօսք չհասկցող մարդ  
ես :

Սալի — Երածւ կըսէք:  
 Բիէռ — Եւ ինչպէս զքեզ համողեւ  
 լու է . ներեցի կըսեմ . ներեցի ,  
 եթէ կուզես անդամ մալբունքտայ ,  
 Սափ — Աստուած կեանք տայ , Աստ-  
 ուած մէկ օրդ հազար ընէ : (Աւ-  
 լընէնէնէ ) .

Բիէռ — (Աւլընէնէնէ) Ոհ , բարի ազա-  
 տում . ճամբան մէկ երկու աղքատի  
 ողորմութիւն տամ . թշուառականը մօր-  
 մէս ծծած կաթու քթէս բերնէս բերաւ  
 (Համարաց նոյելով ժամանակն ալ անցերէ  
 աճապարեմ հագուիլ և երթալ (Աւլընէնէ )  
 ահա ես կերթամ , դուն սա դարչելին  
 ստակը տուր և ճամբէ :

Սալի — Ալ այսուհետեւ հաւասափ  
 եմ որ ինծի պիտի ածիլուիք :  
 Բիէռ — Ինչ ըսել է , քանի որ կեն-  
 դանի եմ , զքեզ ոչ թէ միայն տա-  
 նըս սեմէն ներսչառնել , այլ փողոցէս ,  
 շտալ անդամ անցնել կերդնում :  
 (Աւլընէնէնէ հետ իւրիայ )

## ՏԵՍԻԼ Ը

Սալիրիչն Առանձին

Պարոն Բիէռին վերջին աստիճան  
 աճապարել և ածիլուելին անմիջապէս  
 ետքը ձգել երթալուն նայելու ըլլանք,  
 անշուշտ սիրուհին դանելու համար է .  
 Բայց եթէ փորձանքի մը հանդպի , ո՞վ  
 պիտի աղատէ , հօրմէն տեսած անթիւ  
 բարութիւններէս կ'ստիպուիմ ետեւ էն  
 երթալ , և մուած տանը դրանը քով ըս-  
 պասել , որպէս զի եթէ դժբաղդութիւն  
 մը պատահի , հոգւով մարմնով զայն  
 ազատեմ :

(Աւ Գնէ)

(Զիր ՎԱՐԱԴՐԱՅՐՆ)

(ԹՂՄՆԻԻՆ ՍԵՆԵԱԿՂ)

(ՏԵՍՏՈՒՆԻՆ ԽՈՐԸ ԴՐՈՒՅ ՏԸ, ԱՉՔԻՆ ԴՐՈՒՅ  
ԳՐՈՒՆԴԱՆ ՏԸ : ՁՈՒ ՌԻՆ ԱԵՂՆ ՏԸ ԴՐՈՒՅՄ Ե ՏԵՐ-  
ՏԱԿ ՀԱՖԻԿԱՅԱԼ ՀԱՖԻԿՈՒՅՑ : )

ՏԵՍԻԼ Ա.

ԹՈՒՄԻՒ Առանձին մտածմանց մէջ

ԱՇ, Ո՞րչափ դժուարին է աշխար հիս  
մէջ ժամերով սիրելոյ մը սպասե-  
լը . իրիկուընէ ՚ի վեր ահա հիմայ կու-  
գայ ըսելով ամեն վայրկեան կը նեղու-  
իմ : Ոտնաճայն մը լսելուս պէս իսկոյն  
պատուհանը կը վազեմ, կարծելով թէ  
ինքն է . կարելի՞ է արդեօք դիս խաբե-  
լով ուրիշի մը երթայ , բայց այնչափ  
անգութ չէ . . . . ահա փողոցէն ոտ-  
նաճայն մը կը լսեմ, (Պատուհանէն նոյն)

դարձեալ ՚ի զուր . առանձնութենէս  
խիստ կը նեղուիմ . գոնէ ծառայն կան-  
չեմ : (Զանդակէ և արնէ) :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյն եւ Ֆիլիպ

Ֆիլ — (Պրանը մշ բնաւով) Տիրուհի :  
Թոմմի — Ֆիլիպ Բիէռէն ինչ լուր :  
Ֆիլ — Ճշմարիտ կըսեմ, երկու ժամէ  
՚ի վեր պարտիզին դուռը սպասե-  
լէս ոտքերս ջուր ինջաւ , ոչ եկող կայ ,  
ոչ դացող :

Թոմմի — Ալ այսուհետեւ չիդալուն ալ  
պէտք չէ տարակուսիլ :

Ֆիլ — Այնչափ երդումներով դալ  
խոստանալէն ետքը չեմ յուսար  
թէ չիգայ :

Թումմի — Եթէ զինքը տեսնեմ, խիստ  
պիտի յանդիմանեմ : Դու դնա  
դարձեալ Ֆիլիպ պարտեզին դուռը ըս-

պասէ, հօրեղբայրս եթէ իւր սովորութեանը համեմատ այսօր աւ դայ, չուտով մը ինձ իմացուր :

Ֆիլ — Այդ մասին հոդ մի ըներ, ո՞վ զիտէ հիմա ո՞ր գինետան ծալը մոտած կընետէ ու կընետէ :

(Կ. Ռ. Դ.)

### ՏԵՍԻԼ Գ.

Թամար առանձնու:

Մինչ աղայ էլինք, Բիեռին հետ իրը եղբայր ժամանակ՝ իս կանցնէինք, ինչպէս մեր հայրերն ալ սերտ բարեկամութիւն մը հաստատած էին իրենց մէջ բաւսկան ժամանակ անցնելէն ետքը հարսնյու աղջիկ եղայ, հայրս վաճառականի մը նշանեց զիս, վասն զի ինք ստակը շատ սիրելուն հորսանեաց հանդիսին աւելի ծախսեր չընելու համար առանց ամուսնոյս աղէկ կամ դէշ բը՝

նաւորութեան տէրըլլալը իմանալու միայն հարստութիւնը կը փնտուէր: Վերջապէս ամսւսնանալէս երկու տարի ետքը օր մը այրս յանկարծամահ ըլլալուն այրի մնացի: Ոհ, շատ չնորհակալ եմ իրմէ որ երկու տարուան միջոցին դիս շատ աղէկ կը հոգտար: Այրիութեանս առաջի օրերուն մէջ Բիեռ Պէտքայէն նոր եկեր, և իմանալով իմ այրի մնալս կատաքեր էր զիս կնութեան առնուլ, ինչպէս հայրս հաներ էր, բայց իմկամակորութենէս մերժեցի զինքը, ո՞վ գիտէր որ ի վերջոյ այսափ պիտի սիրէի:

### ՏԵՍԻԼ Ը

Նոյն եւ Ֆէլիպ (Յանուար Եւ Հունվար)

Ֆիլ — Աւետիս Տիրուհի կուգայ կոր:

Թոմա — Ո՞վ:

Ֆիլ — Պարոն Բիեռը:

Թոմա — Ի՞նչ կըսկսու ավելի:

Ֆիլ — Ասերու հարկ չիկայ:

Թոմա — Եւ ո՞ւր էս ճառաբ ով:

Ֆիւ — Ահաւասիկ :

(Ֆէլք Դէնէ)

### ՏԵՍԻԼ Ե

Թոռնի եւ բիւռ :

Թոռնի — Անդութ քեզի :

Բիւռ — Ո՞հ սիրուն թռչնիկս լրոխաւնակ քաղցը խօսքերովդ սիրոս

երջանկացնելու, յանդիմանութիւննե՞ր ուղղել կ'սկսիս . ի՞նչ է յանցանքս :

Թոռն — Ալ ի՞նչ պիտի ըլլայ, ժամը վեցին անպատճառ հոս գտնուել կերթնուս, և ժամը 7 ու կէսին կուտաս, ի՞նչ ստիպողական գործ որ ունէիր, պարտաւոր էիր զանց ընել ու ժամերով պատուհաններուն առջեւ սրտամաշութեամբ անցունելու առիթ չ'տալ :

Բիւռ — Եթէ ուշանալուս պատճառը իմացնեմ, հաւաստի եմ ներողամիտ ըլլալուդ :

Թոռն — Ո՞վ գիտէ ո՞ր զբոսավայրը կը պտտէիր :

Բիւռ — Ոչ, կերթնում պատւոյս վրայ

Թոռնի թէ զբոսավայր բառը մըտքէս անդամ չանցուցի, այլ փորձանքի մը հանդիպեցայ :

Թոռն — Աշխատէ՛ որ համողես :

Բիւռ — Ահա այսպէս ես դու, ուշ գալուս պատճառը կը հարցնես, և պատասխանիս կարեւորութիւն տալչես ուզեր :

Թոռն — Ըսէ՛ տեսնեմ ի՞նչ է ուշանալուդ պատճառը :

Բիւռ — Առտուանց ածիլուելու համար մեր աւանակ ծառայն խրկեցի Ասփրիչս բերել . դժբաղդաբար զայն չի գտնելով ուրիշ մը բերեր էր . կենացս մէջ ասանկ գարշելի մարդ տեսած չէի:

Թոռն — Ինչ ըրաւ :

Բիւռ — Նախ և առաջ բարի տուաւչ տուաւ, խօսքի սկսաւ, բայց ինչ անլախնան պատմութիւն . թշուառականը ատենօք հօրս սակրիչն է եղեր, շատ ստակը առեր, մանկութեան ա-

տենս զիս շատ կը գրկէ եղեր,  
և այլն և այլն . չերկոցնեմ սիրելիս ճիշդ  
երկու ժամ շաղակրատութեարք ան-  
ցուց :

**Թոմի** — Վռնոտելու էիր :

**Բիբո** — Ոչ միայն վանտելով , այլ  
ծեծելու ալ ըլլաս չերթաս , դար-  
շելին դժուարաւ մէկ երեսս ածիլեց  
և այն միջոցին ծնօտս կտրեց :

**Թոմի** — Տեսնեմ . . . իրաւ կտրեր  
է . . . ես ալ քանի որ երեւդ կը-  
նայիմ , ինքնիրենս կըսեմ թէ ինչէն  
այս դեղեցիկ ծնօտդ ուրեցեր ան-  
ճոռնացեր է :

**Բիբո** — ( Ոուր ժերէ շունեւն գիւղն )  
Վերջապէս դուշակածս կատար-  
ուեցաւ , սատանանա՞ն տանի այդ սափի-  
քիւը :

**Թոմի** — Վերջապէս :

**Բիբո** — Թամիս կաղաշեմքայս իսօ-  
քերը վերջացնենք . զի ըլուծները քա-

նի որ միտքս դայ . բարկութենէս կը-  
խենդենամ :

**ՏԵՍԻԼ Զ**

Նորսք եւ Ֆիլիպ ( Անտարելով մտնէ )  
**Ֆիլիպ** — Գլխնուդ . ճարը դտէք ,  
բաներնիդ բուսած է , վամն զի  
հօրեղբայրդ զքեզ տեսնելու կուդայ  
օրիորդ . ( Քնի )

**Թոմի** — ( Շունեւն ) Հիմա ինչ ընկ-  
լու է :

**Բիբո** — ( Ասու անտ վառէւն ) Ահ ինձի  
պահուըտելու տեղ մը , կաղաշեմ  
Թոմի զիս պահէ :

**Թոմի** — ( Ծածկուն գունը սեւնելուն ) Ա-  
հա , հոս եկուը չըլլայ որ ճայն հա-  
նես սիրեիս . ( Բէւրը ծածկուն տուն է ընելուն )  
վաթորիկ մ'է այս հիմա կանցնի :

**ՏԵՍԻԼ Ե**

Բասկալ եւ Թոմիի  
Բաս — Ի՞նչ էր այն Թոմիի , սենեկիդ  
մէջ աղմուկ մը կար . աստ անդ  
վազվուտելու ձայներ . . . ինչո՞ւ այդ -

չափ դեղներ ես . . . միթէ հիւա՞նդ  
ես . . ըսէ շուտ որ կասկածանքէ աղա-  
տիմ:

Թոռն — Ա՛հ սիրելի հօրեղբայրս մի՛  
հարցներ . . . դեռ սիրտս կը տը-  
րոփէ:

Բաս — Ըսէ ի՞նչ պատահեցաւ:

Թոռն — Մինչդեռ առանձին նստած  
կը մտածէի կատուի մեծութեամբ մուկ  
մը չեմ գիտեը ծակը՝ կորսնցուցեր  
էր ի՞նչ էր ըրեր սենեկէս ներս մտաւ:  
Բաս — Ա՛յ գարշելի . . . վե՞րջը:

Թոռն — Իսկ ես զայն տեսնելուս  
պէս խելքս գլխէս թռած, իսկոյն  
տեղէս յատկելով սա անկիւնը գացի,  
այն ալ ետևէս եկաւ, այս անկիւնը ե-  
կայ, գարձեալ զիս գտաւ, ո՞հ երկիւ-  
ղէս խելքս պիտի թռցնէի եթէ բարե-  
բաղդաբար ծառայն հասնելով չի վա-  
նէր:

Բաս — Ո՞հ սիրելի զաւակս (հեւարէ )  
սատանան տանի ղանոնք. եթէ  
մեր տունը գաս պիտի տեսնես որ ա-  
նոնց ձեռքէն ոչ բանիր մնացած է, ոչ  
հաց և ոչ ճրագ: Անցեալներս հարիւր

հատ հաւկիթ առի :

Թոռն — (Մեկո՞մէ) Բերանը բացուե-  
ցաւ ալ չի գոյուիր:

Բաս — Երեկուան օրս հատ մը պէտք  
եղաւ, թարանը բացի, մէկ հակիթ-  
մը չգտայ, սակառը գլուխս անցաւ:  
Բնիթի կատու մը ունէինք, անցեալ օր  
ականջները իւղոտուեր է ի՞նչ է ե-  
ղեր մուկը զայն ալ տարեր է: Սրդարե  
այս մուկերուն ձեռքէն քաշածնիս շատ  
է, իրաւ մուցանք ըսելու ճամբան եկած  
ատենս պարոն . . . ինքը . . . ի՞նչ էր  
անոր անունը . . . լեզուիս ծայրն է . . .  
առ պանդոկի փողոցին զլուխը բնակող  
. . . կոշկակար . . . հա՛ պարոն Տի-  
տոսը բարե ըրաւ. յետոյ:

Թոռն — (Մեկո՞մէ) ի՞նչպէս ազատելու  
է ձեռքէն. (Հւայել ձեռքին մշտական բառները  
բառները) վայ վայ վայ վայ . այս  
ի՞նչ անտանելի ցաւ:

Բաս — Կնոջը հագուստը խիստ գե-  
ղեցիկ էր, կանանչ մետաքսի վր-  
ըայ ձեռքիս չափ ճիւղեր բանուած, ա-  
նանկ գեղեցիկ անանկ սքանչելի անանկ  
փայլուն, զարդարուն և ընտիր ապրանք

Հե կրնար ըլլալ . արդարեւ ինչ մեղքս  
պահեմ աշքս մնաց :  
Բիէռ — (Գլուխը դուռը հանելով հեկուն )  
Հոս ալ շաղակթատիմը հանդիպեցանք :  
Բաս — Իսկ պարօն Տիտոսը որ ըսկս,  
կնոջ հանդերձիցը համեմատ հազ-  
ուերէք, նեղ բանթալոն, կարճ բաժկին,  
զարդարուն մուճակներ, ձեռքը բարակ  
գաւազան մը, և չափաւոր գլխարկ մը :  
Թօմին — (Նորակէ) Ո՞հ, գլուխս, գլ-  
լուխս :  
Բաս — Ինչ է այն Թօմինի գլուխդ կը  
... ցաւի :  
Թօմին — Այս հօր եղբայր, սաստիկ  
կը ցաւի . . . ներեցէք կաղաչեմ  
քիչ մը ատեն առանձին թողէք զիս,  
վասն զի պիտի քնանամ :  
Բաս — Շատ աղէկ, քիչ մը քթիթ  
քացախ քաշէ, գլխի ցաւու դեղը  
ան է : Իրաւ պաղ ջուրն ալ գանակի  
պէտ կը կորի կըսեն երբ գլուխը լուա-  
ցուի, անցեալ գիշեր Պ. Բանթալոնը  
կըսէք, Խեղճ մարդուն գլխուն ամեն  
տեսակ փորձանք եկաւ, այն գեղեցիկ  
աղջիկը ասրսափելինիհարցեր գեղներ,

փելուդ պէս պիտի իյնայ, վասն զի  
ամուսնոյն գէջ մարդ ըլլալէն խեղճը կը  
մաշի : Որչա՞ի աշխատեցայ այն ատեն  
համոզել Պ. Բանթալոնը այն երիտա-  
սարդին չտալ իւր աղջիկը վասն զի ա-  
ղջէկ գիտէի փորցները չափող սրիկայ  
մը ըլլալը :  
Թօմին — (Ենուեն) Հիմա խելքս կը  
թոցնեմ . գլուխս, գլուխս :  
Բաս — Իմ գուշակութիւններս, ամեն-  
քըն ալ կատարուեցան եթէ ուրիշ  
երիտասարդ մը տային, այս փորձանքը  
գիմուն չեր գար :  
Բիէռ — (Գլուխը ծանէիցին հոնելով հեկուն )  
Սափրիւը այս շատախօնին քովը  
բան մը չէ . անկէ աւելի գլուխ կըուե-  
ցընէ կոր :  
Բաս — Անցեալ օր, եկեր ինքինքը  
կը մեղագրեր, ըսելով թէ այն ա-  
տեն պէտք էի քու խօսքերուդ հետեւ-  
ւիլ, փոխանակ զաւկիս երջանկութիւն  
պատճառելու, գերեզմանը պատրաս-  
տեր եմ :  
Թօմինի — Աչ հօրեղբայր, ի պէր Աստ  
տուծոյ մտիկ ընելու ժամանակ

Հունիմ, գլուխս կը ճաթի :  
 Բաս — Յիրաւի աղջիկս զքեզալ սն։  
 հանդիստ ըրի, բռնուելու բերանս  
 չի դոցուիր որ, , , քանի որ եկած եմ  
 երթամ հայրդ ալ տեսնեմ, (ունէն ուս-  
 նուն) տեսէք կը մոռնայի կոր, հայրդ  
 Քիչ մը առաջ վարի գաւթին մէջ քանի  
 մը խենդերու հետ կը վիճէր կոր :  
 Թոմն — Զ'գիտե՞ս իւր բնաւորու-  
 թիւնը, ամենուն հետ կը կոռուի,  
 եթէ զինքը տեսնել կուզէք աճապա-  
 րեցէք վասն զի քիչ մը առաջ տեղմը  
 պիտի երթամ կըսէր :  
 Բաս — Բայց մտիկ ըրէք ծիծաղելու  
 բան մ'է, ըսած մարդիկներէս մէ-  
 կը ճանչցայ, ժամանակաւ մեր քովի  
 խանութը սափրօւթիւն կընէր, անունը  
 Կոմիտաս թէ ոչ, , , այո՛, այո՛ սափ-  
 րիչ Կոմիտաս կը կոչուի :  
 Բիէռ — (Գլուխուցնելու ինքնեւն) Հե-  
 մա բանս բուսաւ :  
 Բաս — Խեղճ մարդը վերջէն խելքը  
 կորսնցուցած ըլլալու է որ հօռեր-  
 նուդ, , , կեցիր նախիմ ինչ կըսէր, , ,  
 այո, «եթէ իմ բարերարիս երիտասարդ

տղան ինձի չի յանձնէք դատաւորին կը  
 մատնեմ զձեզ, ինչ իրաւամբ իմ տէրս,  
 ձեր տունը կը բանտարկէք և կը ծեծէք,  
 ես զինքը ազատելու համար ահա դա-  
 ցի տանը մշակները առի եկայ, » կըսէը  
 ոտքերը բարկութենէն գետին զարնե-  
 լով :  
 Բիէռ — (Նշանէս) Ա՛հ իրաց վախ-  
 ճանը հիմա կը գուշակեմ, թշուա-  
 ռականը զիս կը մատնէ :  
 Թոմն — (Զարբացմաբ) Հայլս ինչ ը-  
 սաւ :

Բաս — Հայրդ ալ կը պատասխանէր  
 թէ . «խենդ մարդ ես իմ ծառաս  
 կը ծեծէի և ոչ քու տէրդ, կորսուէ կը  
 պոռար, ալ այնուհետեւ ինչ ընելին չի  
 զիտեմ, , , բայց այս ինչ աղմուկ է :

### ՏԵՍԻԼ Ը

Նոյնք, Ֆրանսուա, Սավորիչ,  
 Ժուլ Էւ Սիմոն :

Գուան — Թոմնի միւս սենեակը գնա,  
 (Թոմնի հերեւա) Սա աչքը բաց մար-  
 դեկը հոս մարդ պահեր էք կըսեն, ձեզ  
 տեսնեմ կոպիտներ, շուտ գտէք,  
 Սափ (Առաջ աշնելով) Այո՛, պարոն Բիէ-  
 ռին այս տունը մտնելը մենք տե-

**սանը :** ( Կուսեն քնարել )

Յուան — Խիստ բարի, եթէ չգտնէք,  
դիտցիք որ ձեռքէս աղասինիք  
չունիք, ես ձեզի կը սովորեցնեմ դրաց-  
եաց առջև այս տանը մէջ մարդ կը պա-  
հեն բաեւո.

**Սակայն** (Սպազմով բաշխված) Ահաւասիկ  
դաստիարակութեան : (Մերձական) Տեսէք

Բիշտէս կծ կտեր է :  
Բիշտ (Ս-քրիչն հանդիպել) Ա. Գկա.  
դաշեմ, այսօսափը բաւ է զիս մի  
խայտառակիեր :

Սակի — Խօսքս մտիկ ընելով եթէ  
այսօր չած ելուեիք, այս փորձան-  
քին չէիք հանդիպեր:

Ֆռան — (Գորոշումբ) Պուլ և Պ.  
Բիեռ, դու, , Հօրդ հետ իրը  
եղբայր վարուելով գրեգ իրա ուստին

Եղբայր վարուելով զքեզիբը զաւակս  
սիրելու համար այս սրբիկայութիւնը  
ըստ:

**Філіп — Усі місяці:**

Ֆռան — Տեսէ՞ք սա սիր! կայն, վիշ-  
լսանակ ամօթէն գետինն անցնելու,  
կը յանդգնի պատասխանել, ունեցած  
պատիւս արատաւորելով թակարդը իւ-  
նալէդ ետքն ալ ներում խնդրելու կը

Համարձակիս, զքեզ սաստիկ պիտի  
պառժեմ:

Սակայն Ոչ տէր իմ, չեպիտի կը հաս  
դայն պատժել:

Ֆռան — Թշուառական մարդ ովկես  
գուռ որ զիս կը յանդիմանես :

**Wife** — **Gut** **bud** **bus**;

Բիէռ — Գթութիւն տէր իմ, գլ-  
թութիւն. ամեն բան ընելու ի-  
րաւունք ունիս, բայց մանկութենէս  
ի վեր ձեզմէ տեսած յարդանքս և շը-  
նորքներս մոռցնելով ներման արժանի  
չեղող յանցանացս թողութիւն խնդրե-  
լու զիս ոսխաղղը ո՞վ է գիտէք. եր-  
կու տարի է ի վեր աղջկանդ վրայ  
ունեցած սէրսէ:

Բիես — ( Աւան էլեն ) Ճար չիկայ քիչ  
մը շողոքորդելու է ( Ֆանտազին  
բարձր ) ո՞հ այն սերը չէ որ ձեր ներ-

կայութեանը զիս կը խայտառակէ , զիս  
որ ի ը ը որդի կը սիրելի ի կը գ դուէլքք:  
Սակ — (Մէջու) Յիրաւի աղեկ ը ե-  
լան կը բանեցնէ կը :

Բիեռ — ( Ֆանուսակն սուբին հնալուկ ) Ա. հ  
տէր իմ ներէ՛ , և թող զիս :

Ֆուան — ( Որո՞վ շունելու ) Ել՝ կատաղի  
հօրդ մեռնելուն դուն սատկէիր  
աւելի աղէկ կըլլար :

Սափ Եւ ծառայք — ( Խանուհելու Յը-  
սառանակ ) Անոր յանցանացը փա-  
խարէն պատժոյ արժանի ըլլալը մենք  
դիտենք բայց կաղաչենք այս անգամ  
ներեցէք :

Ֆուան Ասիկայներելու յանցանք մէ:  
Սափ — Ինչ օգուտ եղածը եղած է ,

այսափ մարդկանց մէջ խայտա-  
ռակուիլը բաւական է իրեն , եթէ տա-  
րաձայնելու ըլլաք , ձեր պատիւն ալ  
կարատաւորի , ըստ իս , աւելի աղէկ  
կընէք եթէ ձեր աղջիկը ասոր տաք :

( Ծառայք միաբերան ) Ա. յո՛ , այո՛ , շատ  
աղէկ կըլլայ :

Ֆուան — Խենդէք էք ի՞նչ էք , այսպիսի  
սրիկայն ի՞նչպէս վեսայ ընդունիմ :

Սափ — Ճշտարիտ կըսեմ թէ ես ձեզ  
մէ աւելի որդւոցդ և քու պատիւդ-  
կը պաշտպանեմ , բայց քանի մը տարի  
առաջ բարեկամներէս մէկուն ալ այս-  
պիսի դիպուած մը պատահեցաւ , աղ-

ջկան հայրը ձեզ նման չէր ընդունէր ,  
բայց վեց ամիս չանցած աղջիկը հի-  
ւանդացաւ և վերջապէս մեռաւ :

Ֆուան — ( Մէկուսէ ) Ա. յո՛ ասանկ դեպք  
մ'ալ ես կը յիշեմ : Եթէ իմ աղջիկս ալ  
մեռնի . ի՞նքինքս ծովը նետելու եմ ,  
կարծեմ դէ չենք ըներ աղջիկնիս երբ  
ասոր տանք . թէպէտև սրիկայ ըսկինք .  
այլ այն անուանի մարդուն զաւակն է . ե  
րիտասարդութեան կրակոտ եռանդէն  
յանցանք մը դործեր է ի՞նչ ընենք :

( Ծառայից ) դուքք քիչ մը ատեն առան-  
ձին թողէք զմեզ : ( Փառա Ա. յո՛ և բասկու-  
դին ) թէպէտ և գքեղւաւ մը կը վար-  
ցատրէլ բայց հօրդ հետ ունեցած  
սէրտ բարեկամութիւնս պարաք կը դը-  
նէ վրաս զքեզ հոգաւ . ուրեմն զքեզ  
իմ փեսաս կնտրեմ կընդունիս :

Սափ — ( Ի՞նչուեն ) Հոգւով մարմնով :  
Բիեռ — ( Խուռան-թէո՞ք ) Ի՞նչ կըսէք տէր :  
Ֆրան — Ա. յո՛ , այս շաբթու հարսան-  
եաց հանդէօը պիտի կատարուի , զնա'  
պատրաստուէ , ես ալ երթամ աղջկա-  
նըս աւետեմ : ( Մէկնէ )

ՏԵՍԻԼ Թ.

Բիեռ եւ Սափրիչ

Բիեռ — Ա. հ , հիմա պիտի խենդենամ ,

Վերջապէս պիտի կարենամ թու.  
նիս կնութեան առնուլ։  
Սափ — Աղօթէ որ ես հոս դտնուե-  
ցայ . ապա թէ ոչ բանդ բուսած է։  
Բիէռ — Մեծապէս շնորհակալ եմ աղ-  
նիւ Սափրիչ . տուր ձեռքդ հարուրեմ։  
Սափ — Քու լիցի քաւ լիցի տեր իմ։  
Բիէռ — (Քու իւ առաջ հանելու թէպէտ  
և ջնջին դռմար մ'է . բայց ի վերջոյ  
դարձեալ կը աեսնուինք։  
Սափ — Ոչ . ոչ . ես անանկ ստակի  
գլուխ ծոռղներէն չեմ բարեկամա . այ-  
սու հետեւ իմ ձեռոքս ածիլուելու խոս-  
տացիր ուրիշ բան չեմ ուզեր։  
Բիէռ — Մի տարակուսիր ատոր . քա-  
նի որ կենդանի եմ ձեզմէ ի զատ և ոչ  
ուրիշի խանութ պիտի յաճախեմ։  
Սափ — Պատմութիւններս մտիկ ընե-  
լէ չի պիտի ձանձրանառ այնպէս չէ։  
Բիէռ — Այդ կէաը քիչ մը դժուարին  
է . . . բայց ինչ ընենք կընդունինք։  
Սափ — Ուրեմն երթանք հարսանեաց  
պատրաստութիւնները տեսնենք։

ԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

7/11. 1922

Հ. ԱՅԱՍՏԻ ՁԱՎԱՐ

199

2013



ՀՀ Ազգային գրադարան

NL0865636

